

5265/18.06.12
936

ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 1395 - Ա

«15» հունիս 2012թ.

ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ,
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 734 -Ն որոշմամբ հաստատված «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու» ժամանակացույցի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի հուլիսի 8-ի» N 1325-Ա հրամանով հաստատված «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի ցանկ»-ի 10-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության» 12-րդ կետի «դ» ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության բաժնի պետին՝ և «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝

1) Հայաստանի Հանրապետությունում դեղերի ոլորտի պատշաճ կարգավորման և տեղեկատվության փոխանակման նպատակով ապահովել համագործակցություն Առողջապահության համաշխարհային կազմակերպության, «Դեղագործական տեսչությունների համագործակցության սիսեմա» միջազգային կազմակերպության, Եվրոպայի Խորհրդի դեղերի որակի և առողջապահության վարչության, Եվրոպական դեղերի գործակալության և այլ երկրների դեղերի ոլորտը կարգավորող կազմակերպությունների հետ:

Տեղեկ. 18.06.12 Վ. ՕԳՆՈՎ

2. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝

1) Կադրային ներուժի հզորացման նպատակով ապահովել պատշաճ արտադրական գործունեության (այսուհետ՝ ՊԱԳ) /պատշաճ բաշխման գործունեության (այսուհետ՝ ՊԲԳ) փորձագետների շարունակական վերապատրաստումը միջազգային համապատասխան կառույցներում՝ այդ թվում ՊԱԳ/ՊԲԳ համապատասխանության գնահատման համատեղ դիտարկումների մասնակցության միջոցով:

2) ապահովել Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ դեղարտադրող) արտադրատարածքներում ՊԱԳ համապատասխանության գնահատման դիտարկումների իրականացումը՝ «Դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմա» միջազգային կազմակերպության անդամ կազմակերպությունների տեսուչների (այսուհետ՝ տեսուչներ) հետ համատեղ սույն թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում:

3) Համատեղ դիտարկումները սկսելուց մեկ ամիս առաջ դեղարտադրողներին ծանուցել պլանավորվող դիտարկման ժամկետի և այդ նպատակով արտադրատարածքի դոսյե ներկայացնելու անհրաժեշտության մասին:

4) Տեսուչների կողմից դեղարտադրողների ներկայացրած արտադրատարածքի դոսյեների գնահատումը և արտադրատարածքների համատեղ դիտարկումը իրականացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի նոյեմբերի 15-ի N 2237-Ա հրամանով հաստատված կարգով:

5) Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում համատեղ դիտարկումների ֆինանսավորումն իրականացնել՝ օգտագործելով «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության զուտ շահույթի միջոցները և(կամ) ֆինանսավորման այլ աղբյուրներ:

3. Սահմանել, որ դիտարկումների արդյունքում կազմված հաշվետվությունները կարող են փոխանակվել այլ երկրների դեղերի ոլորտը կարգավորող իրավասու մարմինների հետ:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Հ. ՔՈՒՇԿՅԱՆ